«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2024-2025
Պատմություն (8-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

1. **Դեռևս 13-րդ դարում Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքում» նշել էր. «Արդարության հիմքը խղճի ազատությունն է, բայց օրենքն է սահմանում դրա սահմանները»: Երեք դար անց միայն Եվրոպայում լուսավորականների գաղափարախոսությունների մեջ հայտնվեցին համարժեք գաղափարներ: Կարո՞ղ ես նշել հայտնի որևէ լուսավորականի անուն և նրա գաղափարը, որը համարժեք էր Մ. Գոշի ներկայացրած դրույթին: (1 միավոր**

   Պատասխան՝

   Ջոն Լոք (17-րդ դար) Ազատությունը ոչ թե անարխիա է, այլ կարգավորվածություն՝ օրենքի միջոցով, <u>որտեղ յուրաքանչյուրի ազատությունը վերջանում է այնտեղ, որտեղ սկսվում է մյուսինը</u>:

2. **Ստորև պատկերված իշխանական տները (տես նրանց զինանշանների նկարները) միավորված են եղել մեկ իշխանության ներքո, որի զինանշանը պատկերված է առանց գրառման (տես հաջորդ էջում): Փորձի՛ր պատասխանել տրված հարցերին. (3 միավոր)**

   ա/ ո՞ր իշխանական տան մասին է խոսքը(ու՞մ զինանշանն է պատկերված առանց գրառման)

   բ/ ինչպիսի՞կարևորագույն պաշտոններ են զբաղեցրել նրանք Հայաստանի հարևան երկրում(նշե՛ք նաև այդ երկիրը)

   գ/ Հայաստանի ո՞ր մասերում էր տարածվում նրանց ազդեցությունը



Վահրամյանների զինանշանը Օրբելյանների զինանշանը Պռոշյանների զինանշանը

ա) Զաքարյաններ

բ) Վրացական թագավորությունում Սարգիս (և ապա որդին՝ Զաքարեն)
Զաքարյանը՝ամիրսպասալար(սպարապետ),

Իվանեն՝ աթաբեկ(վրացական թագաժառանգի խնամակալ)

գ) Հայաստանի հյուսիսային և արևելյան մասում

---

3. Տրված բառաշարքերից առանձնացրեք այն բառերը, որոնք վերաբերում են՝
ա/ պարսիկներին,
բ/ արաբներին,
գ/ մոնղոլներին,
դ/թուրքերին և տեղադրեք ճիշտ սյունակներում(4 միավոր)

Խալիֆա, էլայեթ, սուլթան, սատրապություն, խան, շահ, իլխանություն , Կարակորում, Աբբասյաններ / Օմայաններ, Բաղդադ, Ստամբուլ,ամիրայություն, Սելիմ Ահեղ, շիա, սուննի,Շահ Աբաս, Թավրիզ, «մեծ սուրգուն», Չինգիզ խան, ջիզիա, Մեքքա, իսլամ, Օսման, թաթար, «ծովի տիրակալ», «ղզլբաշներ», զրադաշտականություն, մարզպան:

ա	սատրապություն, շահ, Աբբասյաններ / Օմայաններ, շիա, Շահ Աբաս, Թավրիզ, «մեծ սուրգուն», զրադաշտականություն, մարզպան:
բ	Խալիֆա, Բաղդադ, ամիրայություն, Մեքքա, իսլամ
գ	խան իլխանություն, , Կարակորում, Չինգիզ խան, ջիզիա, թաթար, «ծովի տիրակալ»
դ	Էլայեթ, սուլթան, Ստամբուլ, Սելիմ Ահեղ Սուննի, Օսման,, «ղզլբաշներ»,,

4. Օգտվելով տրված հարցերից՝ լրացրե՛ք աղյուսակը՝ միմյանց հետ համեմատելով Կիլիկիայի Հայկական և Բագրատունյաց թագավորությունները: (7միավոր)

ա/ աշխարհագրական ի՞նչ տարածք էին ընդգրկում
բ/ ու՞մ դեմ էին պայքարում անկախանալու համար
գ/ ե՞րբ են հռչակվել թագավորություն, ո՞վ էր առաջին արքան, ու՞մ օրոք և ո՞ր կաթողիկոսներն են օծել
դ/ ո՞րն էր մայրաքաղաքը և ե՞րբ էր հռչակվել
ե/ ինչպիսի՞ն էր բանակի հիմնական կառուցվածքը և ամենակարևոր առանձնահատկությունը
զ/ միջազգային հարաբերություններում համագործակցության ի՞նչ օրինակ կնշեք
է/ ի՞նչ ավարտ ունեցավ թագավորությունը և ե՞րբ կործանվեց:

Կիլիկիայի Հայկական թագավորություն	Բագրատունյաց թագավորություն
Ա. Գտնվում է Փոք Ասիայի հարավ-արևելյան մասում և սահմանակից է Միջերկրական ծովին(Տավրոսի, Անտիտավրոսի և Ամանոսի լեռների միջև)	Ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը, իսկ նրանց տոհմական կալվածքները ընդգրկում էին Շիրակը
Բ. Ձգտում էի ազատագրվել բյուզանդական ազդեցությունից	Արաբական խալիֆայության դեմ
Գ. 1198թ. հունվարի 6-ին Տարսոն քաղաքում, Լևոն Ա-ն օծվեց Գրիգոր 6-րդ Ապիրատի կողմից	885թ. օգոստոսի 26-ին օծվեց Բագարանում Գևորգ Գառնեցու կողմից
Դ. Սիսը, 1173թ.	Անին, 961թ.
Ե. Բաղկացած էր արքունի և իշխանական գնդերից, ըստ անհրաժեշտության հավաքվում էր նաև աշխարհազորը: Կանոնավոր բանակի միջուկը կազմող հեծելազորը՝ ասպետական	Բաղկացած է մարզպետական և արքունական գնդերից, հեծելազորը կազմում էր բանակի հիմանական հարվածային ուժը, ըստ անհրաժեշտության հավաքվում էր նաև

գունդը: Ուներ նաև ռազմական նավատորմ:	աշխարհազորը: Բանակի թիվը հասնում էր մինչև 100 հզ-ի, և բաղկացած էր տարբեր զորատեսակների
Զ.համագործակցում էի խաչակիրների հետ, մահմեդական պետությունների հետ: Որպես օրինակ՝ Մլեհի և Հալեպի մահմեդական տիրակալ Նուր ադ Դինի հետ համագործակցությունն էր, կամ Լևոն 2-րդի և Հռոմի պապի կամ Ֆրիդրիխ Շիկամորուսի մնջև բանակցությունները՝ թագ ստանալու համար	Օրինակ Բյուզանդական կայսրության հետ կնքել է առևտրական պայմանագիր,Վասիլ (Բարսեղ) 1-ը թագ է ուղարկել Աշոտ Ա-ին, արաբական խալիֆը Աշոտ 2-րդ Երկաթին ճանաչել է Շահնշահ Հայոց
Է. Կործանվեց 1375թ, երբ մամլյուքները և նրանց դաշնակից թյուրքերը ներխուժեցին Կիլիկիա:	**Կործանվել է 1045թ., երբ բյուզանդացիները գրավեցին մայրաքաղաք Անին:**

5. Տարբեր ժամանակաշրջանների և երկրների այս ղեկավարները մնացել են պատմության մեջ որպես մեծագույն զորավարներ կամ պետական գործիչներ: Բայց նրանցից յուրաքանչյուրն իր գործունեության ընթացքում ձգտել է անել ավելին, քան միայն հողային տարածքների կամ իշխանության ձեռք բերելն էր: Ներկայացված թեավոր արտահայտությունները համապատասխանեցրու իրենց հեղինակներին և նրանցից յուրաքանչյուրի գործունեությունից ներկայացրու առնվազն մեկ քայլ, որը կհիմնավորի նրա արտահայտությունը: (5միավոր)

1

2

3

4

5

4. «Ես պետք է լինեմ իմ ժողովրդի առաջին ծառան»։

Եկատերինա Մեծ, Լուսավոր միապետություն, օրենքների բարեփոխում, մշակույթի հովանավորություն

1. «Ռուսաստանը պետք է լուսավորել արևմուտքից»։

Պետրոս Մեծ, Ռուսական եվրոպականացում, ժամանակակից բանակ, նոր մայրաքաղաք

3. «Պատմության մեծ հարցերը լուծվում են երկաթով և արյունով»։

Օտտո Ֆոն Բիսմարկ,

Գերմանիայի միավորում, "երկաթի և արյան" դիվանագիտություն

5. «Իմ հոր շնորհիվ ես ապրում եմ, բայց ուսուցիչիս շնորհիվ՝ ապրում եմ արժանապատվորեն»։

Ալեքսանդր Մեծ, հելլենիստական մշակույթի տարածում, արևելքի ու արևմուտքի սինթեզ

2. «Իմ իրական փառքը չի բխում նրանից, որ ես հաղթել եմ քառասուն ճակատամարտերում. Վաթեռլոոն կջնջի այդ բոլոր հաղթանակների հիշողությունը: Բայց այն, ինչ հավերժ կապրի, իմ ‹‹Քաղաքացիական կոդեքսն›› է»։

Նապոլեոն Բոնապարտ, նոր իրավական համակարգ (Նապոլեոնյան օրենսգիրք), կայսրության մոդել